ՀՏԴ 947.925

Doi:10.54503/0135-0536-2024.2-26

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ VIII Դ. ՎԵՐՋԻՆ*

ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Մամիկոնյաններ, Բագրատունիներ, Աշոտ Մսակեր, Խալիֆայություն, Արշարունիք, Տայք, Տարոն:

Նախաբան

Հայաստանը 700–885 թթ. այսրկովկասյան երկրների (Քարթլի, Առան, Շիրվան և Դերբենդ) հետ Արաբական խալիֆայության Արմինիա փոխարքայության մասն էր[1]: Համեմատած սասանյան տիրապետության շրջանի՝ արաբական տիրապետության ժամանակ տեղի նախարարական համակարգում զգալի փոփոխություններ էին կատարվել: Դա կապված էր և՛ ավատատիրական հարաբերությունների զարգացմամբ, և՛ արաբների վարած ծանր հարկային քաղաքականությամբ, և՛ օտար էթնիկ տարրի ներթափանցմամբ:

Արդեն VII դարում նկատվում էր մրցակցություն երկու խոշոր նախարարությունների՝ Մամիկոնյանների ու Բագրատունիների միջև: Իմիջիայլոց, դա ակնհայտ է դառնում նաև Հայոց իշխանի պաշտոնին տոհմերի հավակնություններից: Այդ դարում Հայոց իշխանի պաշտոնը վարում էին Համազասպ (655–662) և Գրիգոր (662–685) Մամիկոնյաններն ու Աշոտ (685–689) և Սմբատ Բյուրատյան (693–702) Բագրատունիները: Արմինիա ոստիկանության կազմավորմամբ պատկերը հետզհետե փոխվեց, քանի որ VIII դարում՝ բացառությամբ Մուշեղ Մամիկոնյանի (748–753) ու Տաճատ Անձևացու (781–785), Հայոց իշխանի պաշտոնը գտնվում էր Բագրատունիների ձեռքում[2]: Հայոց իշխանի պաշտոնում Սմբատ Բյուրատյան Բագրատունու երկրորդ կառավարումից սկսած՝ նշանակում կամ ճանաչում էր միայն խալիֆան[3]:

Կարելի է նկատել, որ տիրելով Հայոց իշխանի պաշտոնին և Խալիֆայության հետ մտնելով «լեզու գտնելու» դիվանագիտական հարաբերությունների մեջ՝ Բագրատունիներն աստիճանաբար պետք է հզորանային ու ընդարձակեին իրենց հողային տիրույթները:

Մամիկոնյանների տիրույթները

Արդեն V–VII դդ. Մամիկոնյաններին էին պատկանում հսկայական տիրույթներ՝ Տայք նահանգը, Տուրուբերան նահանգի՝ Տարոն, Խութ, Ասպակունի

** Ներկայացվել է 21. V. 2024 թ., գրախոսվել է 26. V. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:*

[1] *Եղիազարյան. 2010, 29–30:*

[2] *Տեր-Ղևոնդյան. 1964, 130:*

[3] Юзбашян. 1988, 34.

յաց ձոր, Սասուն, Բզնունիք, Հարք, Արշամունիք գավառները, V–VI դդ. Բարձր Հայք նահանգի՝ Դարանաղյաց և Եկեղյաց գավառների եկեղեցապատկան տիրույթները, ինչպես նաև՝ V դ. կեսերից Մոկք նահանգի Ջերմաձոր գավառի մի հատվածը՝ Զռայլ ամրոցով[4], Այրարատ նահանգի՝ Բագրևանդ գավառը, Արագածոտն գավառի մեծ մասը, Կոտայք գավառի որոշ հատվածները, որի Ջագ գյուղը Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը նվիրեց պարսիկ Սուրհանին[5]:

Մամիկոնյան նախարարներն այլ տիրույթներ ևս ձեռք բերեցին, մասնավորապես VIII դ. երկրորդ կեսին Արշարունիք գավառում՝ ավելի ստույգ՝ Արտագերս ամրոցն իր հարակից շրջաններով[6]: Այսպես, Ղևոնդ պատմիչը հաղորդում է, որ Հրահատ կոմսի որդի Մուշեղ Մամիկոնյանը կոտորեց արաբ պաշտոնյաներին, որոնք եկել էին իր գավառ՝ Արտավազդ Մամիկոնյանի ձեռքով սպանված արաբների արյան վրեժը լուծելու, որից հետո «ինքն գաղթէր յամրոցսն Արտագերոյ՝ հանդերձ տամբ իւրով»[7]: Դա հանդիսացավ 774–775 թթ. համաժողովրդական մեծ ապստամբության[8] սկիզբ: Ղևոնդ պատմիչի հաղորդումից պարզ է դառնում, որ Հրահատ կոմս Մամիկոնյանի որդին՝ Մուշեղը, իր գավառում էր իշխում, որը, ինչպես կտեսնենք, Բագրևանդը չէր, որտեղից նա իր տնով (ազգով, տոհմով) տեղափոխվում է Արշարունիք գավառի Արտագերս ամրոցը: Այնուհետև Ղևոնդն Արտագերսը նշում է որպես Մուշեղի ամրոց[9]: Պատմիչի հաջորդ վկայությունից պարզ է դառնում, որ այդ ժամանակ Մուշեղը, Արտագերսից փոքրաթիվ զորքով գնալով Բագրևանդ գավառ, հարկահաններին սրի է քաշել[10]:

Ուրեմն, իսկապես, Մուշեղի տիրույթները Բագրևանդից հեռու էին, ըստ երևույթին՝ Տարոնում[11]: Արշարունիք գավառը պատկանում էր Կամսարական նախարարությանը, որոնք, ինչպես հայտնի է, բարիդրացիական հարաբերություններ ունեին Մամիկոնյանների հետ: Եվ քանի որ Մուշեղ Մամիկոնյանի կողմից արաբներին կոտորելն ազդարարելու էր համահայկական ապստամբության սկիզբը, ապա անհավանական չէ կարծել՝ Կամսարականները կարող էին կամովին Մամիկոնյան իշխանին տրամադրել անառիկ Արտագերս ամրոցը: Այստեղ տեղին է մեջբերել Վարդան վարդապետի այն հաղորդումը, որ «և զի Ջահապ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, և խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին»[12]: Պատմիչի հաղորդման այս հատվածը տարակարծություններ առիթ է տվել. հետազոտողների մի մասը կարծում է, որ Ջահապի կինը Մամիկոնյան տոհմից էր[13], իսկ մյուսը՝ Բագրատունի[14]: Ահա Վար-

---

[4] Хачатрян. 2022, № 2, 56.
[5] *Վարդանյան. 2019, 18–33:*
[6] *Ադոնց. 2006, 448:*
[7] *Ղեւոնդ Վարդապետ. 2007, 830:*
[8] *Վարդանյան. 2017, 16–27:*
[9] *Ղեւոնդ Վարդապետ. 2007, 831:*
[10] *Ղեւոնդ Վարդապետ. 2007, 830:*
[11] *Հայոց պատմություն. 2018, 321:*
[12] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 76:*
[13] *Գրիգորյան. 1983, 51, Հայոց պատմություն. 2018, 335:*
[14] *Գրիգորյան. 2011, 29:*


ՄԱՍԻԿՈՂԱՅՔԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ ԱՇՏՈՏ ՄԱՍԿԵՐԻ ՕՐՈՔ (IX ԴԱՐ - 826)
ՏՈՆՏՈՍԻ ՎԱՍ
Քարտեզի հեղինակ և գծագրողներ՝ © գեոգր. Հենրիկ Խաչատրյան
Ալ-Մամունի ռազմական գործողությունները
Ալ-Մամունի ռազմական գործողությունների ուղղությունները
Հայոց Իշխանների տարածքները
Վասակ-Սիսակների տարածքները
Մամի-Բուգաների տիրույթները
Հայոց Իշխանությունի ոչ հարակից գավառների տարածքները
Ամրոցներ
Ամրոցներ Բերդեր, ամրոցներ
Գյուղեր Բնակավայրեր
Մասշտաբ 1:2 380 000 (նախագիծ)
Ալ-Մամունի ռազմական գործողությունները
Ալ-Մամունի ռազմական գործողությունների ուղղությունները
Հայոց Իշխանությունի ոչ հարակից գավառների տարածքները
Վասակ-Սիսակների տարածքները
Մամի-Բուգաների տիրույթները
Հայոց Իշխանությունի ոչ հարակից գավառների տարածքները
Ամրոցներ
Ամրոցներ Բերդեր, ամրոցներ
Գյուղեր Բնակավայրեր
Մասշտաբ 1:2 380 000 (նախագիծ)
42°
43°
38°
39°
ՍՅՈՒՆԻՔ
ԱՐՑԱԽ
ՏԱՎՈՒՇ
ԱՐԱՍԱԾՈՏՆ
ԱՐԱՍ գետ
ՎԱՆԱ ԼԻՃ
ՍՅՈՒՆԻՔ
ՍՈՒՆԻՔ
ՍՅՈՒՆԻՔ
ՍՅՈՒՆԻՔ
ՍՅ

դան վարդապետի հաղորդումը. «Բայց անկելոցն ի մեծ պատերազմին մնացորդք՝ էին այսոքիկ. երկու որդիք Սմբատայ որդւոյ Աշոտի, որոց անուանքն՝ Աշոտ և Շապուհ. և Սամուելի եղբայր մի Շապուհ անուն. Իսկ Մուշեղայ՝ երկու որդիք և չորս դստերք. անդրանկին Շապուհ անուն: Որք անկան յերկիրն Վասպուրական. զորս եսպան զերկոսին Մեհրուժան Արծրունի, որպես թէ ի պատճառս հօրն նոցա եղև աղէտն մեծ. և մի ի քերց նոցա ետ զինքն յամուսնութիւն Ջահապի ումեմն իսմայելացւոյ՝ թիկունս առնելով զնա (ընդգծումը մերն է – Հ. Խ.)»[15]: Պատմիչի այս հաղորդումից պարզ հետևում է՝ Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիներին, որոնք ապաստանել էին Վասպուրականում, սպանում է Մերուժան Արծրունին: Ապա նշվում է, որ նրանց՝ նահատակված Մամիկոնյան եղբայրների մի քույրը, որպես թիկունք՝ մահմեդական Ջահապի հետ էր ամուսնացել, որի համար էլ վերջինս «յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց», իրականում, սակայն իր տիրապետության տակ էր վերցրել Մամիկոնյաններին պատկանող հատվածը՝ Արտագերս ամրոցն իր շրջակայքով:

Համաձայն Ստեփանոս Ասողիկի՝ Արշարունիքը Կամսարականներից գնել էր Աշոտ Մսակերը[16]: Դա պետք է տեղի ունեցած լիներ առնվազն 785 թ. հետո, երբ Հայոց իշխան Տաճատ Անձևացու հետ զոհվեց նաև Ներսեհ Կամսարականը[17], որը, ըստ էության, հիշատակվող վերջին Կամսարական նախարարն էր:

Մասնագիտական գրականության մեջ, թերևս, վրիպման հետևանքով ենթադրվել է, որ Աշոտ Մսակերը Շիրակ գավառը ևս գնել էր Կամսարականներից[18]: Սակայն Վարդան վարդապետը հստակ նշում է, որ Աշոտ և Շապուհ Բագրատունիները «և ելեալք զկողմամբքն Շիրակայ՝ հարին զզօրսն Իսմայելի՝ որ անդ, և գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»[19]: Փաստորեն, Շիրակն արաբների ռազմակալման ներքո էր և այդ պատճառով է, որ միայն Արշարունիքն է գնվում Աշոտ Մսակերի կողմից:

Ա. Վարդանյանը գտնում է, որ Ջահապն Արշարունիքի Մամիկոնյաններին պատկանող հատվածում տեր ու տնօրինություն կարող էր անել այն ժամանակ, երբ արդեն կենդանի չէին թե՛ Դավիթ ու Շապուհ Մամիկոնյանները, թե՛ Մուշեղի երկու որդիները[20]: Այսինքն, Ջահապն Աշոտ Մսակերի հետ պետք է բախվեր 786–806 թթ. հետո, երբ Շապուհ և Դավիթ Մամիկոնյաններն այլևս չկային[21]: Այսպիսով՝ տեսնում ենք, որ Ջահապի և Աշոտ Մսակերի բախման շարժառիթները, Արշարունիքին տիրելն էր, որն էլ ավարտվում է Բագրատունիների հաղթանակով:

Նկատենք, որ Գաբեղյանք գավառը թյուրիմացաբար համարվել է Մամիկոնյանների տիրույթ[22], որտեղ վերջիններիս հաստատվելու վերաբերյալ Վար-

[15] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 76:
[16] Ստեփանոսի Տարաւնեցի Ասողիկ. 2011, 707:
[17] Ղեւոնդ Վարդապետ. 2007, 845:
[18] Հայոց պատմություն. 2018, 333:
[19] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 76:
[20] Վարդանյան. 2016, 48–49:
[21] Վարդանյան. 2017, 4:
[22] Եղիազարյան. 2011, 92, Վարդանյան. 2019, 26:

դան վարդապետը հայտնում է. «Եւ Գրիգոր Մամիկոնեան արիաբար պահեալ զհաւատն ելանէ ի բանտեն, և գայ մտանէ ի գաւառն իւր Բագրևանդ, և կամէր ամրանալ ի գաւառն Գաբեղինից ի Գագանածական. որ և զկնի եօթն աւուրց մեռանի»[23]: Այստեղ խոսքը գնում է Քուրդիկ Մամիկոնյանի որդու՝ Գրիգորի մասին, ով Բուղայի ձերբակալությունից (850-ական թվականներ) հետո վերադարձել էր իրեն պատկանող Բագրևանդ գավառը: Վերոբերյալից, ի տարբերություն Արշարունիքում ունեցած տիրույթների, ամենևին չի երևում, որ Մամիկոնյաններն այստեղ ամուր հաստատվել կամ տիրել են Գաբեղյանքին, կամ նրա ինչ-որ հատվածին: Գրիգոր Մամիկոնյանը ցանկանում է պարզապես «ամրանալ» Գաբեղյանք գավառում, սակայն յոթ օր անց մահանում է:

VIII դ. Բագրատունիների կողմից Մամիկոնյանների տիրույթներին տիրելու խնդիրը

Մասնագիտական գրականության մեջ տարածված է այն տեսակետը, թե արդեն VIII դ. վերջերին Բագրատունիները տիրել են քայքայված նախարարությունների տիրույթներին: Դրանց մեջ առանձնանում են հատկապես Տայքն ու Տարոնը, որոնք դարեր շարունակ եղել են Մամիկոնյանների տոհմական տիրույթներ: Այս կապակցությամբ Յոզեֆ Մարկվարտը դիպուկ նկատել է, որ դեռևս VII դ. Վարազտիրոց Բագրատունին Տարոնը, ապա Տայքը դիտարկում էր որպես իրեն հուսալի ապաստարան[24]: Նշենք, որ հետազոտողները միակարծիք չեն, թե երբ են նշված տիրույթները Մամիկոնյաններից անցել Բագրատունիներին: Տայքին անդրադարձած վերջին ուսումնասիրություններում նշվում է IX դ. սկիզբը[25] և 775–779 թթ.[26], իսկ Տարոնի պարագայում՝ VIII դ. վերջին կամ IX դ. սկզբներին՝ մինչև 804 թ.[27], և 806–810 թթ. միջակայքում[28]:

Մամիկոնյան նախարարության համար ճակատագրական էր 774–775 թթ. հակաարաբական ապստամբությունը, որի արդյունքում տոհմը զրկվեց իր նախկին հզորությունից, իսկ մի փոքր ուշ՝ նաև տիրույթների մեծ մասից: Բագրատունիները, թեև տիրում էին Հայոց իշխանի պաշտոնին, այդուհանդերձ, տիրապետում էին միայն Սպեր, Կոգովիտ, Ծաղկոտն գավառներին ու Բագավանին՝ հարակից շրջաններով[29]:

VIII դ. վերջերից և մինչև IX դ. սկզբները տեսած քաղաքական իրադարձությունների արդյունքում Բագրատունիները հնարավորություն ստացան ընդարձակելու իրենց հողային տիրույթները, որն իրականացրեցին 775 թ. Արձնիի ճակատամարտում զոհված Հայոց իշխան և սպարապետ Սմբատ Բագ-

---

[23] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 81:
[24] Մ ա ր կ ո ւ ա ր տ. 1913, 34:
[25] Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2014, 51:
[26] Ն ա զ ա ր յ ա ն. 2019, 220:
[27] Գ ր ի գ ո ր յ ա ն. 1983, 55:
[28] Վ ա ր դ ա ն յ ա ն. 2016, 50:
[29] Ըստ էության, Բագրատունյաց տոհմի տարածքային աճը սկսվեց Աշոտ Մսակերի ժամանակ (Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2011, 29, 81, 88):

բատունու որդիները՝ Աշոտ Մսակերն ու Շապուհը: Այս առթիվ Վարդան վարդապետը հաղորդում է. «... և ելեալք զկողմամբքն Շիրակայ՝ հարին զզօրսն Իսմայելի՝ որ անդ, և գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց: Եւ այսպէս ըստ բախտին ելեալ Աշոտի քաջի՝ չինէ զԿամախ, և բնակեցուցանէ ի նմա զընտանիս իւր.... »[30]: Այսինքն՝ Տայքը գրավել են Աշոտն ու Շապուհը, որից հետո Աշոտը, կառուցելով Կամախ՝ իրականում Կալմախ ամրոցը, այնտեղ է բնակեցրել իր ընտանիքը: Այս հաղորդումը, ճիշտ է, խոսում է Տայքի՝ Բագրատունիներին անցնելու փաստի մասին, սակայն ժամանակագրություն չկա, թե մոտավոր ե՞րբ դա կարող էր տեղի ունեցած լինել: Հաջորդիվ՝ Վարդան վարդապետը նշում է, որ Աշոտ Մսակերը «... երթեալ հազար արամբ յԱղիովիտ գաւառ, և առ ինքն գումարեալ զամենայն աղխիւն իւրեանց (Գնունիներին– Հ. Խ.), տանի բնակեցուցանէ ի Տայս»[31]: Այս հաղորդումից հետևում է, որ Գնունյաց տոհմին օգնության գալու ժամանակ Տայքն արդեն Աշոտի իշխանության տակ էր գտնվում:

Հարցի քննության համար կարևոր է Աշոտ Մսակերի կառավարման գոնե մոտավոր թվականների ճշգրտումը: Առաջինը հիշատակում է Ասողիկը. «Իսկ ըստ իշխանաց կարգին զկնի Սմբատայ որդւոյ Աշոտոյ՝ Աշոտ որդի նորա, որ Մսակեր կոչիւր՝ ամս Ի»[32]: Ինչպես երևում է, պատմիչն Աշոտ Մսակերի իշխանությունը դնում է հորից անմիջապես հետո, ինչը ճիշտ չէ: Աշոտ Մսակերին հիշատակում է նաև Սամվել Անեցին, որը, ի տարբերություն Ասողիկի, նշում է թվական. «801 (արդի թվական), 803 (փրկչական թվական) – Աշոտ որդի Սմբատա՝ Մսակերն (Հայոց) ամս Ի (20)»[33]: Սակայն, այս դեպքում կստացվի, թե Աշոտ Մսակերը կառավարել է մինչև 821 թվականը (801+20), ինչը ևս ճիշտ չէ: Ասողիկի այն հաղորդումը՝ Աշոտին հաջորդեց որդին՝ Սմբատ Աբլաբասը, որը Հայոց 275 թ. (=արդի թվականի 826) ազատվեց գերությունից և եկավ Հայաստան[34], փաստում է՝ Աշոտի վախճանի թվականը պետք է լիներ 826 թ.: Եթե Աշոտ Մսակերի վախճանը 826 էր և կառավարել էր 20 տարի, ինչպես նշում են աղբյուրները, ապա նրա կառավարման սկիզբ է դառնում ոչ թե 801, այլ՝ 806 թ.: Ամեն պարագայում ակնհայտ է, որ նրա կառավարումը սկսվում է IX դ. սկզբին, որից հետո էլ, ինչպես կտեսնենք ստորև, նա տիրացավ Մամիկոնյանների հինավուրց տիրույթներին:

Անդրադառնալով Աշոտ Մսակերի կողմից նոր տիրույթների գրավմանն ու դրանց հերթականությանը՝ պետք է դիմենք Ասողիկի և Վարդան վարդապետի հաղորդած տեղեկություններին: Ասողիկի համաձայն. «Սա (Աշոտ Մսակերը – Հ. Խ.) դանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգէն Կամսա-

---

[30] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 76:*

[31] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 77:*

[32] *Ստեփանոսի Տարաւնեցի Ասողիկ. 2011, 707:*

[33] *Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 161:*

[34] *Ստեփանոսի Տարաւնեցի Ասողիկ. 2011, 707: Իրականում Հայոց իշխանը ոչ թե Սմբատն էր, այլ Աշոտի ավագ որդին՝ Բագարատը, որն էլ հետո դարձավ նաև Իշխանաց իշխան (Դրասխանակերտցի. 2010, 429, Թովմա Արծրունի եւ Անանուն. 2010, 141):*

բականաց եւ զարքունիսն ի Կոգովտէ յԱրշարունիս փոխեաց (ընդգծումը մերն է – Հ. Խ.)»[35]: Իսկ ըստ Վարդան վարդապետի. «... և ելեալք (Աշոտ Մսակերն ու Շապուհը – Հ. Խ.) զկողմամբքն Շիրակայ՝ հարին զգօրսն Իսմայելի՝ որ անդ, և գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»[36]: Վերոնշյալ հաղորդմամբ՝ Ասողիկը մատնանշում է, որ Արշարունիքը (մի մասը) գնելուց Աշոտն արդեն Հայոց իշխան էր, քանզի «արքունիք» տեղափոխելը պետք է վերաբերեր իշխանական նստոցին[37]: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ հաստատվելով արաբների կողմից որպես Հայոց իշխան՝ Աշոտ Մսակերը լծվեց Բագրատունիների հողային տիրույթների ընդարձակման գործընթացին: Եվ սա պատահական չէ, որ հենց Արշարունիքն էր առաջին տիրույթը, որը ձեռք բերեց Աշոտ Մսակերը, քանի որ Կոգովիտիում ամրացած Աշոտը չէր կարող առանց Արշարունիքի գրավել Շիրակը, Աշոցքն ու Տայքը: Նկատենք նաև, որ Աշոտ Մսակերը հանգիստ կարող էր գանձագին ձեռքբերել Արշարունիքն առանց Հայոց իշխան լինելու, քանի որ դա հողատիրության հիմնական ձևերից էր: Վերոնշյալից կարող ենք եզրակացնել, որ Աշոտ Մսակերը IX դ. սկզբին կարգվելով երկրի կառավարիչ՝ Հայոց իշխան, իրականացրել է Բագրատունյաց տոհմական տիրույթների ընդարձակում:

Այս համատեքստում Գնունյաց տոհմի՝ Աշոտի օգնությանը դիմելը, կարծում ենք, ընդգծում է նրա կարգավիճակը՝ Հայոց իշխան լինելը, այլապես տրամաբանական կլիներ օգնություն ակնկալել ավելի մոտ գտնվող ու ոչ պակաս հզոր Վասպուրականի Արծրունի իշխանից: Այս հարցադրումը պատահական չէ, քանի որ IX դարում Գնունիների մի ճյուղը հիշատակվում է Վասպուրականի իշխանության մեջ[38]: Կարծում ենք, անտեսվում է նաև այն փաստը, որ Արմինիա վարչական միավորի գերագույն տերը խալիֆն էր և առանց նրա հրամանագրի ոչ մի նախարար ժառանգապես չէր իշխի իր տիրույթում: Պարզապես հարց է ծագում՝ ոմն գահերեց իշխան ի՞նչ հիմքով պետք է մի ամբողջ տոհմ արաբական նախարարակործան քաղաքականությունից ազատեր՝ նրանց Աղիովիտից տեղափոխելով Տայք և չհանդիպել պատժիչ գործողությունների: Վարդան վարդապետի այդ անուղղակի տեղեկությունը, ըստ երևույթին, խոսում է Աշոտ Մսակերի պաշտոնական կարգավիճակի մասին, որն էլ ինքնին բացառում է Գնունիների այդ տեղափոխումը թվագրել 785–790 թթ.[39]:

Նկատենք, որ Աշոտ Մսակերի հայրը՝ Սմբատ սպարապետը, ապստամբության մասնակիցների շարքում էր, և արաբները դա չէին մոռացել. այս առումով Բագրատունիների տոհմն այնքան էլ շահեկան վիճակում չէր: Ու ամենևին պատահական չէր, որ 775 թ. ճակատամարտից հետո ապստամբության մասնակիցներ Վասակ և Ատրներսեհ Բագրատունիները հեռացան Տայք՝ խուսա-

---

[35] *Ստեփանոսի Տարաւնեցի Ասողիկ. 2011, 707:*

[36] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 76:*

[37] *Այս մասին մեր բանավոր զրույցի ընթացքում նշել է պ. գ. դ. Ա. Եղիազարյանը:*

[38] *Թովմա Արծրունի եւ Անանուն. 2010, 143, 173:*

[39] Тер-Гевондян. 1977, 125; *Հմմտ. Հայոց պատմություն. 2018, 333:*

փելով արաբների վրեժխնդրությունից: Արաբները, մի տարածաշրջանում, ուր մեծ կորուստների գնով վերականգնել էին իրենց տիրապետությունը, թույլ չէին տա Աշոտ Մսակերին միավորիչ որևէ գործողություններ կատարել՝ առանց իրավական հիմքի և ռազմական ուժի, իսկ հիմքը դա արաբների կողմից ընկալելի լինելն էր, այսինքն՝ Աշոտը պետք է նշանակվեր Հայոց իշխան:

Այսպիսով՝ IX դ. սկզբին նշանակվելով Հայոց իշխանի պաշտոնին՝ Աշոտ Մսակերն իշխանական պաշտոնական նստոցը տեղափոխում է Արշարունիք, ընդ որում՝ վերջինս կարող էր ձեռք բերվել նախքան Հայոց իշխան կարգվելը, քանի որ գանձագին էր: Այնուհետև եղբոր՝ Շապուհի հետ գրավում է Շիրակը, Աշոցքն ու Տայքը: Նվաճումների այս երթուղին հուշում է, որ այն IX դարից շուտ չէր կարող լինել, իսկ Տայքից հետո հաջորդ գավառը Տարոնը պետք է լիներ: Դրա օգտին է խոսում Վարդան վարդապետի հետևյալ տեղեկությունը. «Բայց տունն Ջահապայ զօրացեալ ի Դուին, իբրև հինգ հազարաւ կամեցան գնալ ի Տարօն, յիշխանութիւնն Աշոտոյ որդւոյ Սմբատայ»[40]: Այս անցքերը, ինչպես կարծում է Գ. Գրիգորյանը, տեղի են ունեցել 813 թ.[41], ինչն էլ օրինաչափորեն ցույց է տալիս, որ Տարոնը IX դ. սկզբին է անցել Աշոտ Բագրատունուն:

Տայքի ձեռքբերման հետ կապված կատարենք կարևոր դիտարկում՝ դրան ժառանգական իրավունքով Աշոտ Բագրատունու տիրելուն[42]: Ըստ Վարդան վարդապետի հաղորդման. «և զի Ջահապ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, և խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին, զայն առին Աշոտ և Շապուհ»[43] (ընդգծումն մերն է – Հ. Խ.) : Այստեղ «տիրել ի ձեռն կնոջն» կապակցությունից կարող ենք բխեցնել, որ խոսքը ժառանգական իրավունքի մասին է, և Ջահապը, լինելով զոհված Մուշեղ Մամիկոնյանի փեսան, ժառանգական իրավունքով հավակնում էր տիրել Արշարունիքի մյուս մասին: Այսպես, սա ակներև խոսում է՝ ժառանգական իրավունքը գործում էր, ինչից էլ կարող ենք հետևություն անել, որ Աշոտ Մսակերը, լինելով Սամուել Մամիկոնյանի թոռը[44], ևս կարող էր ժառանգական իրավունքով հավակնել Մամիկոնյանների կալվածքներին: Ընդ որում, ժառանգական իրավունքի առկայությունը չէր ենթադրում այդ տարածքների «լուռ» հանձնում Բագրատունիներին: Լինելով ժառանգության հավանական թեկնածու՝ Աշոտը, որպես գերակա, զենքի ուժով տիրեց Տայքին, ինչն իրավաչափ էր և չառաջացրեց ոչ մի դժգոհություն[45]: Մեկ հանգամանք ևս. Աշոտ Մսակերն իր եղբոր հետ կա-

---

[40] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 78:*

[41] *Գ ր ի գ ո ր յ ա ն. 1983, 54–55:*

[42] *Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2011, 121: Հմմտ. Գ ր ի գ ո ր յ ա ն. 1983, 53:*

[43] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 76:*

[44] *Ղ ե ւ ո ն դ պատմիչը, թվարկելով մահացած զորագլուխներին, նշում է. «...ի տանէն Մամիկոնեանց Մուշեղ զաւրավար (Տարոնի ճյուղ – Հ. Խ.) եւ Սամուէլ տէր Մամիկոնէից (Տայքի ճյուղ – Հ. Խ.), աներ սպարապետին մեծի (Սմբատ Բագրատունու – Հ. Խ.)» (տե՛ս Ղ ե ւ ո ն դ Վ ա ր դ ա պ ե տ. 2007, 838):*

[45] *786 թ. Վասպուրականի վերակացու կարգվեց Դավիթ Մամիկոնյանը (Վկայաբանութիւն սրբոց իշխանացն Համազասպայ եւ Սահակայ Արծրունեաց. 2007, 954): Այդ նույն թվականին սպանվեցին Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիները,*

րող էր դիմադրել ու հաղթել արաբ Ջահապին իրավական հիմքի առկայության պայմաններում, հակառակ դեպքում արաբական գաղութներ ստեղծող, նախարարական համակարգը քայքայող խալիֆայությունը հազիվ թե ձեռնպահ մնար իր իսկ հովանավորյալներին օգնելուց: Սա խոսում է այն մասին, որ Աշոտ Բագրատունին ուներ Հայոց իշխանի կարգավիճակ, որը ենթադրում էր նաև՝ նա հայկական տիրույթների մեջ ապրող արաբական տարրի իշխանն էլ էր: Այսինքն՝ տեղի ունեցավ ավատատիրական կարգերին հատուկ գերակայի ու ստորակայի միջև բախում, որն էլ ավարտվեց Բագրատունիների հաղթանակով՝ հող նախապատրաստելով հետագա գրավումների համար:

Եզրակացություն

Մամիկոնյանները VIII դ. վերջին իրենց տիրույթներին միացրեցին Արշարունիք գավառում գտնվող Արտագերս ամրոցն իր շրջակայքով: Ստույգ հնարավոր չէ ասել, թե հսկայական այն տիրույթները, որոնց տիրում էին Մամիկոնյաններն առավել վաղ, նույնությամբ պահպանվել էին մինչև IX դարը, թե՝ ոչ: Արձնիի 775 թ. ճակատամարտի պարտությունից հետո, ճիշտ է, ի տարբերություն Կամսարականների, Խոռխոռունիների, Ռշտունիների և այլ տների, Մամիկոնյան նախարարությունը չվերացավ, սակայն խիստ թուլացած առժամանակ դուրս մնաց երկրի քաղաքական ասպարեզից: Արդյունքում՝ Մամիկոնյանները IX դ. սկզբին, երբ Աշոտ Մսակերը նշանակվեց Հայոց իշխան, կորցրին Տայքն ու Տարոնը՝ իրենց ձեռքում պահելով միայն Բագրևանդն ու Սասուն-Խութի մի մասը:

Հենրիկ Խաչատրյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ պատմական աշխարհագրություն, Հայաստանի և Իրանի իրավունքի պատմություն: Հեղինակ է 10 հոդվածի: ORCID:0000-0002-8518-9564. henry.khachatryan89@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 2006, Երկեր, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 652 էջ:

Գրիգորյան Գ. 1983, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX–X դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 197 էջ:

Գրիգորյան Մ. 2011, IX դարասկզբի Արշարունիքի տերերի հարցի շուրջ. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 1, էջ 26–32:

Եղիազարյան Ա. 2010, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Երևան, ԵՊՀ հրատ., 192 էջ:

Եղիազարյան Ա. 2011, Հայ Բագրատունիների տերությունը (885–908 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 394 էջ + 6 քարտեզ:

իսկ Սամուել Մամիկոնյանի եղբոր՝ Շապուհի մասին ոչինչ հայտնի չէ: Ուստի, կարծում ենք, որ Աշոտ Մսակերի դեմ հանդես եկող Մամիկոնյան իշխան չէր լինի):

Եղիազարյան Ա. 2014, Մեծ Հայքի Տայք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի. – «Վէմ» (Երևան), թիվ 2, էջ 35–61:

Թովմա Արծրունի եւ Անանուն. 2010, Պատմութիւն տանն Արծրունեաց. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ. դար, Գիրք Ա, Անթիլիաս–Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 46–313:

Հայոց պատմություն. 2018, հ. II, Միջին դարեր. գիրք առաջին (IV դարի սկիզբ–IX դարի կես), Երևան, «Զանգակ» հրատ., 704 էջ + 24 էջ ներդիր:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, Վենետիկ, Սուրբ Ղազար, 184 էջ:

Ղեւոնդ Վարդապետ. 2007, Պատմաբանութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի. – Մատենագիրք Հայոց, հ. Զ, Ը. դար, Անթիլիաս–Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 735–851:

Յովհաննէս Դրասխանակերտցի. 2010, Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ. դար, Անթիլիաս–Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 357–584:

Մարկուարտ Յ. 1913, Ա. Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, Բ. Վրական Բագրատունեաց ծագումը, Վիեննա, Մխիթարեան տպ., 160 էջ:

Նազարյան Լ. 2019, Տայքում և Կղարջքում Բագրատունիների վրացական ճյուղի իշխանության հաստատման թվականի շուրջ. – ՊԲՀ, № 2, էջ 211–222:

Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթեւոսյանի, Երեւան, «Նաիրի», 504 էջ:

Ստեփանոսի Տարաւնեցի Ասողիկ. 2011, Պատմութիւն տիեզերական. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ. դար, Երեւան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 639–829:

Վարդանյան Ա. 2016, Տարոն գավառի պատկանելիության հարցի շուրջ (VIII դ. երկրորդ կես – IX դ. սկիզբ). – «Հայոց պատմության հարցեր» (Երևան), հ. 17, էջ 41–51:

Վարդանյան Ա. 2017, Մամիկոնյան իշխանական ընտանիքը Բագրևանդում և Տարոն–Սասունում IX–XII դդ. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 3–16:

Վարդանյան Ա. 2019, Մամիկոնյան նախարարական տան տիրույթները. – «Հայագիտության հարցեր», № 1, էջ 18–33:

Վկայաբանութիւն սրբոց իշխանացն Համազասպայ եւ Սահակայ Արծրունեաց. 2007. – Մատենագիրք Հայոց, հ. Զ, Ը. դար, Անթիլիաս–Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 949–966:

Տեր-Ղևոնդյան Ա. 1964, «Հայոց Իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում. – ՊԲՀ, № 2, էջ 121–134:

Хачатрян Г. 2022, Нахарарские (княжеские) владения Марзпанской Армении (V–VI вв.). – ИФЖ, № 2, с. 47–62.

Тер-Гевондян. 1977, Армения и Арабский халифат. Ереван, АН АрмССР, 323 с.

Юзбашян К. 1988, Армянские государства эпохи Багратидов и Византия IX–XI вв. М., «Наука», 304 с.

ВОПРОС О ВЛАДЕНИЯХ МАМИКОНЯНОВ В КОНЦЕ VIII В.

ГЕНРИК ХАЧАТРЯН

Резюме

Ключевые слова: Мамиконяны, Багратуни, Ашот Мсакер, Халифат, Аршаруник, Тайк, Тарон.

Начиная с 700–885 гг. Армения вместе со странами Южного Кавказа (Картли, Арран, Ширван и Дербент) представляла собой единую административную единицу Арминия Арабского халифата. Мамиконяны были одним из сильных, если не сильнейшим нахарарским (княжеским) родом, который владел обширными землями. Уже с VII в. видно соперничество между Мамиконянами и нахарарами Багратуни. В VIII в. институт Первенствующего князя (Князь Армении), кроме двух случаев, в основном находился в руках князей Багратуни.

Во второй половине VIII в. Мамиконяны, а точнее их ветвь из Тарона во главе с Мушегом Мамиконяном приобрели крепость Артагерс с сопредельными землями, которая находилась в уезде Аршаруник. После поражения в битве с арабами при Ардзни в 775 г. Мамиконяны на время покинули политическую арену Армении. Хотя они ослабли, так как вложили в битву весь свой военный потенциал, но не исчезли, как нахарарские роды Камсараканов, Хорхоруни, Рштуни и т д. После битвы участники восстания из рода Багратуни покинули свои владения чтобы избежать мести арабов.

Точка зрения, что Ашот Мсакер Багратуни завладел доменами ослабших Мамиконянов уже вскоре после 775 г., не обоснована. Ашот Мсакер в начале IX в., когда стал Князем Армении, перенес свою резиденцию из уезда Коговит в уезд Аршаруник, часть которого он купил у потомков ослабших Камсараканов. Это опирается на сообщение историка Асогика. Уже после этого Ашот Мсакер как Первенствующий князь начал расширять свои феодальные владения. Вместе со своим братом Шапухом завоевал у араба Джахапа другую часть уезда Аршаруник, который принадлежал Мамиконянам, потому что он был женат на дочери Мушега Мамиконяна и сам планировал завоевать Аршаруник полностью. После этого, они взяли уезд Ширак, Ашоцк и провинцию Тайк. По косвенным сведениям Вардана вардапета можно предположить, что Ашот Мсакер, будучи по материнской линии потомком рода Мамиконянов, мог претендовать на Тайк. Что в конечном счете и случилось: он завоевал Тайк, затем и уезд Тарон. Нельзя точно утверждать, сохранили ли Мамиконяны все свои территории в VIII в. Можно только уверенно сказать, что в начале IX в.

они потеряли Тайк и Тарон, в итоге сохранив только уезд Багреванд и часть Сасун-Хута.

Генрик Хачатрян – к. и. н., научный сотрудник отдела средневековой истории Института истории НАН РА. Научные интересы: историческая география, история права Ирана и Армении. Автор 10 статей. ORCID:0000-0002-8518-9564.henry.khachatryan89@gmail.com

ISSUE ON THE POSSESSIONS OF THE MAMIKONYANS AT THE END OF THE EIGHTH CENTURY

HENRIK KHACHATRYAN

S u m m a r y

Keywords: the Mamikonyans, the Bagratunis, Ashot Msaker, Caliphate, Arsharunik, Tayk, Taron.

Beginning from the year of 700 to the middle of the 9th century, Armenia together with the countries of the South Caucasus (Kartli, Arran, Shirvan and Derbent) constituted a single administrative unit called Arminiya of Arab Caliphate. The Mamikonyans were one of the strong, if not the strongest Nakharar (princely) family, which owned vast lands. Already from the 7th century the rivalry between the Mamikonyans and the Nakharars of Bagratuni is visible. In the 8th century, the institution of the First Prince (Prince of Armenia), except for two cases, was mainly in the hands of the princes of Bagratuni.

In the second half of the 8th century the Mamikonyans, or rather their branch from Taron, led by Mushegh Mamikonyan, acquired the Artagers fortress with adjacent lands, which was located in the Arsharunik district. After the defeat in the anti-Arab battle of Ardzni in 775, the Mamikonyans became so weak that they temporarily left the political arena of Armenia. Although they weakened, as they had put all their military potential in that battle, they did not disappear like the Nakharar clans of the Kamsarakans, Khorkhorunis, Rshtunis, etc. After the battle, participants in the uprising from the Bagratuni clan left their possessions to avoid the revenge of the Arabs.

The point of view that Ashot Msaker Bagratuni took possession of the domains of the weakened Mamikonyans shortly after 775 is not supported. At the beginning of the 9th century Ashot Msaker, when he became the Prince of Armenia, moved the residence of the Prince from Kogovit to the Arsharunik district, part of which he had bought from the descendants of the weakened Kamsarakans. This is based on Asoghik's report. After this, as the Prince of Armenia, he began to expand his feudal holdings. Together with his brother Shapuh, he conquered, from the Arab Jahapp, the other part of the Arsharunik

Պատմություն • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 2

district, which belonged to the Mamikonyans, as he was married to the daughter of Mushegh Mamikonyan and he planned to conquer Arsharunik completely. After that, they took the district of Shirak, Ashotsk and the province of Tayk. According to the indirect information from Vardan Vardapet, one can assume that Ashot Msaker, being a descendant of the Mamikonyan clan on his mother's side, could lay claim to Tayk, which ultimately happened. He conquered Tayk, then the district of Taron. We have no information on whether the Mamikonyans retained all their territories in the 8th century. We can confidently say that at the beginning of the 9th century they lost Tayk, then Taron, eventually retaining only the district of Bagrevand and part of Sasun-Khut.

Henrik Khachatryan – Candidate of Sciences in History, Researcher at the Department of Medieval History of the Institute of History of NAS RA. Scientific interests: historical geography, history of Law of Armenia and Iran. Author of 10 articles. ORCID:0000-0002-8518-9564. henry.khachatryan89 @gmail.com